Ա· ՏԱՐԻ ԹԻՒ 79 ԹԵՐԹԸ 20 ՓԱՐԱՁ· ՀԻՆԳՇԱԲԹԻ 4 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1875

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ

Աղթամարայ կաթողիկոսական խնդրոյն վերջնական լուծմանը համար այսօր եկեղեցական համագումար ժողովը նիստ ընելու հրաւիրուած է, և յուսալի է թէ սոյն երկարաժամանակեայ խնդիրն ալ այս անգամ կը վերջանայ։

Սոյն համագումար ժողովոյ դէմ շատ բաներ խօսուեցաւ, շատ հակառակութիւններ և առարկութիւններ եղան, սակայն ասոնց և ո՛չ մէկն ալ նշանակութեան արժանի կարեւորութիւն մ՚ունէր, երբ խնդիրն իր պարզ վիճակին մէջը նկատուէր, զոր շատեր չեն մը կ՚ակնկալէին զայն դադար յուղելէն։

Խաչատուր սրբազան կրկին ամբաստանութեամբ հոս բերել տրուեցաւ, մէկն էր՝ իւր նախորդը իւր թելադրութեամբը սպաննած ըլլալու քաղաքային ամբաստանութիւնը, միւսն էր՝ իւր նախորդին կենդանութեանը՝ կաթողիկոս օծուած ըլլալուն կրօնական ամբաստանութիւնը։

Այս կրկին ամբաստանութեանց քաղաքային մասը՝ իրեն վերաբերեալ ձեռնհաս Ատեանին այսինքն Բ. Դուռը յանձնուեցաւ՝ իր քննութիւն, որն որ այս անգամ տուաւ իւր վճիռը թէ, Խաչատուր սրբազանին վրայ մարդասպանութիւն գործած ըլլալու յանցանք մը չը կարենալով հաստատուիլ, այս խնդրոյն մէջ պարտաւոր չը համարուիր։

Ամբաստանութեանց կրօնական մասին քննութիւնն ալ այն ատեն հոդելոյս Պօղոս Պատրիարքի օրով կրօն. ժողովոյ, և անտի եկեղ. համագումար ժողովոյ քննութեանն ու որոշմանը ենթարկուելով, սա՛ևս վճռեց այն ատեն թէ նախորդին կենդանութեանը միջոցին կատարուած կաթողիկոսական ընարութիւնն ու օծումը եկեղեցւոյ առաջը վաւերական չը համարուիր։

Կրօնական ժողովն այս վճիռն ձեռք առնելով, և տեսնելով որ սոյն վճիռն ի գրաւոր նկատառութեանց (քօնսիտէռան) մէջ պակաս և ուշադրութեան չ՚առնուած պարագայներ կան, խնդիրը իւր առարկութեամբն հանդերձ վերստին համագումար ժողովոյ քննութեանը յանձնել որոշած էր, որոյ համար է այս օրուան գումարումը։ Համագումար ժողովը,

Եթէ սա իւր նախորդ վճիռը փոխէ, այն ատեն կրօնական ժողովոյ հետ համաձայնութիւն մը գոյացած ըլլալով, վճռոյն գործադրութենէն զատ ուրիշ բան չպիտի մնայ։ Իսկ եթէ պնդէ՛ իւր առջի որոշմանը վրայ, բնական է թէ խնդիրն այն ատեն եկեղեցւոյ բարձրագոյն իշխանութեան այն է աւելնայն Հայոց Վեհ. կաթողիկոսին որոշմանը ենթարկել հարկ պիտի ըլլայ։

Ինչպէս կը տեսնուի, այս խնդրոյն մէջ մինչև հոս՝ երեսփ. ընդհ. ժողովը գործ մը չունի, որոյ ատեանն հանել կ՚ուզուէր վերոյիշեալ խնդիրը, իսկ երբ այս խնդրոյն կրօնական մասն ալ քաղաքային մասին պէս իւր վերջնական վճիռն ստանայ, և Խաչատուր սրբազան պատրաստուի երթալ Աղթամարայ աթոռոյ կաթողիկոսութիւնը ժառանգելու, այս վայրկենին կ՚սկսի ընդհ. ժողովոյ պաշտօնը, և այն ալ ո՛չ ուրիշ բանի, բայց եթէ Աղթամարայ կաթողիկոսական աթոռն ալ Հայաստանեայց ընդհ. կաթողիկոսութեան՝ Մայր Աթոռոյ հետ եկեղեցւոյ և՝ նուիրապետական բարեկարգութեան պահանջմանն և շահուցը համաձայն, ներդաշնակ յարաբերութեան մէջ դնելու համար, որպէս զի ապագային մէջ Աղթամարայ վիճակէն ալ, Սոյ մէջ հղածին պէս, անտեղութիւն մը ծագելուն առիթ և պատճառը մէջ տեղէն բարձած չ՚ըլլալու անխոհեմ ընթացքը այս անգամ ալ վերստին կրկնած չըլլայ։

Ամեն. Ս. Պատրիարքը, այս չաբաթ օր գաւառացւոց պոպէն խընդրոյն կարգադրութեանը համար Մեծ եպարգոսին երթալէն յետոյ, վերադարձին Զմիւռնիոյ նորընտիր կուսակալ Խուրշիտ փաշայի ալ այցելութիւն մը տալով, Զմիւռնիոյ ազգային գործոյ կարգադրութեանը և կանոնաւորութեանը վրայօք երկար տեսակցութիւն մ՚ըրաւ, որոյ մէջ Ն. Սրբ. բազնութեան ըրած հետեւեալ խօսքը նշանակութեան արժանի է։

« Ամէն մարդ իրեն համար մասնաւոր կարծիք կամ համոզումներ կրնայ ունենալ, ըսած է, իսկ օրինաց ճշդիւ գործադրութեանը մասին, ո և է անհատական կարծիք կամ համոզում լռելու են։ Ես իսկ երդում ըրած եմ, առաջի Ազգիս և Տէրութեան, Ս. Հմանադրութիւնը անթերի գործադրելու, ինչ կարծիք ալ որ ունենամ, պարտական եմ իմ այդ ուխտակատարել ճիշդ և անթերի, ապա թէ ոչ՝ պարտաւոր և պատասխանատու կը մնամ Տէրութեան և Ազգիս առջև։ Ճիշդ Սահմանադրութիւնը իւր գործադրութեանը դէմ եղած արգելքները ունի այժմ, Զմիւռնիոյ մէջ, այդ արգելքներն ինչքան ալ բարեմտութեամբ եղած լինին, դարձեալ անզօր են Սահմանադրութեան գործադրութիւնը ետ ձգելու»։

Ս. Պատրիարքն այս ընդհանուր դիտողութենէն յետոյ, կը խնդրէ կուսակալէն որ արգելքներն բառնալով, Սահմանադրութեան գործադրութիւնը դիւրացնելու, և աղգային գործոյ վիճակը վաղ ընդ վոյթ բարեկարգութեան և կանոնաւորութեան մէջ մտցնելու բարեհաճի։ Կուսակալը խիստ իրաւացի գտնելով Ս. Սրբազնութեան ըրած դիտողութիւններն, կը խոստանայ հարկ եղածն՝ի գործ դնել, իւր օրինաւոր պահանջումն ու խնդիրը կատարելով գինքը կատարելապէս գոհացնելու համար։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՀ· ՍՈՒԼԹԱՆԻՆ ՀԵՏ ԻԿՆԱԹԻԷՎ ԶՕՐԱՊԵՏԻՆ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Անգղիական թերթ լրագրին կ. Պօլսոյ թղթակիցը, Ռուսաց դեսպան Իկնաթիեւ զօրապետին հետ Արեւելեան խնդրոյն վրայօք ըրած հետեւեալ մէկ տեսակցութիւնը կը հաղորդէ յիշեալ լրագրին։

« Իկնաթիեւ զօրապետն ալ Պիսմարք իշխանին գաղափարէն է, կըէ, որն որ համարձակ և անկեղծօրէն կը խօսի որքան ալ անկարեւոր մէկն ըլլայ իւր խօսակիցը։

« Ըստ այն կարծիքն ունի թէ, զուտ ճշմարտութենէն զատ աւելի աղէկ խաղող բան չը կրնար ըլլալ զմարդ, վասն զի անկէ՛ աւելի աղէ-

կը չը կայ մարդոց՝ ինքզինքնին խաբելու, և եթէ ո՛չ հակառակը՝ գէթ խօսուածէն տարբեր բանի մը հաւատալու միտումին զօրացնելու և գրգռելու համար։

«Իկնաթիեվ ըսաւ ինչ որ իրեն անհակառակելի ճշմարտութիւն մը կերեւէր, և ալ արտօնութիւն տուաւ որ ըսածները կարենամ ուրիշի՝ ևս հաղորդել։ Կը հաւաստեր թէ Գերմանիոյ և Աւստրիոյ մէջ եղող իւր պաշտօնակիցներն ալ իրեն պէս կը խորհէին, և թէ չատ բարերաղդ էր իմանալով որ ասոնց հետաւած քաղաքականութիւնը՝ Անգղիոյ դեռապահին ալ հաւանութեանն արժանացեր է։

Կը յայտնէ թէ իւր վեհապետին հրամանաւն է որ, սորա Օտէսա գտնուած միջոցին, քովը գնացեր է, և թէ Սուլթանին փափաքանա՛ցը վրայ էր, որ Լիվատիայէն իւր վերադարձին՝ Ն. Վեհափառութեան հետ տեսակցութիւն մ՛ունեցած էր։ Եւ թէ ինչ որ խօսած էր կայսեր հետ պալատին մէջ, մարդէ գաղտնի մը նալու բան մը չէր։

«Ռուսիա և միւս տէրութիւնները, ըսեր է Իկնաթիեվ զօրապետը Սուլթանին, բնաւ չեն ուզեր իրենց կարծիքն ու խորհուրդը բռնի ընդունել տալ Բ. Դրան։ Ասոնց միտքն է պարզապէս ցոյց տալ թէ ըստ իրենց կարծեաց՝ որո՞նք էին օսմանեան վարչութեան թերութիւններն ու սխալմունքը, անոնք երկրին ժողովրդեանը գանգատներն ու բողոքները միայն կրկնած են, և այն դժուարութիւնները ու վտանգը ցոյց տուած են, որոց մէջ կ'գըտնուի ինքը և կսպառնայ իրեն դէմ, վերջապէս օտար տէրութիւնք ամենայն անկեղծութեամբ և բարեսըրտութեամբ բարենորոգման մը խորհուրդը կուտան։

«Սակայն Իկնաթիեվ զօրապետն ամենէն աւելի աղէկ գիտէ ու համոզուած է, և զոր առանց պահելու ալ կըսէ թէ, այդ բարենորոգումը չը պիտի կարենայ գործադրուիլ և իրականանալ, և իւր այս կարծեացն ալ՝ի հաստատութիւն, խել մ'անհերքելի ապացոյցներ յառաջ կը բերէ։

«Եւ ի՞նչ է իրապէս գործոց վիճակը։ — Երեք երկիրներ, որք երբեմն Եւրոպական Տաճկաստանի նահանգներն էին, Րումանիա, Սերվիա և Գարատաղ, գրեթէ բոլորովին անկախ երկիրներ եղած են, ուրիշ երկու նահանգներ ալ, Հերսէքովինն և Պոսնիա, մասամբ մը զէնք առին և յարդ այնպէս կեցած են։

«Միւս գաւառաց մէջ, ինչպէս են Պուլկարիա և Րումելի, ժողովրդեան ժխգոհութենէն արդէն բռնութեան տեսարանները յառաջ եկած են, և ապստամբներն ալ նուաճելու և հնազանդութեան բերելու համար Բ. Դրան ըրած տկար ջանքերն ալ՝ իւր հարստութիւնը նուազեցուցին։ Թո՛ղ ապստամբք մինակ այս ձմեռը դիմանան, ինչպէս որ ալ պիտի դիմանան ըստ ամենայն հաւանականութեան, այն ատեն Բուլիս ամիսը պիտի տեսնէ Օսմանեան արժէքուղթ ունեցողներն. . . ։

«Տաճկաստան անկարող է նուաճել ապստամբութիւնը, ապստամբք չեն կրնար յաղթահարել Բ. Դուռը։ Ճեղափոխութիւնը չը կրնար զսպուիլ, բայց և չունի ալ կարողութիւն տարածուելու։ Զօրութեան այս հաւասարութիւնը Ռուսիոյ խաղն է և ոչ այլ ինչ։

«Եթէ ապստամբք պէտք եղածին պէս կարենային օգնութիւն մը տեսնել կէս–անկախ Սերվիոյ և Գարատաղի իշխանութենէն կսպասենք, չատ հաւանական է թէ ատոնք Եւրոպական Տաճկաստանի բոլոր երկիրներն ալ արշաւելով, գային բարձրէն մինչև Վոռիորի եղերքները դիտելու։ Բայց այս բանը Ռուսիոյ քաղաքականութեանը գործին չէր գար։

«Ռուսիա, որ միշտ նախատեսութիւնն ու խոհեմութիւնը ձեռքէ չը թողուր, Միլան իշխանին և Նիքօլա իշխանին ձեռքերը բռնած է։ Մինակ այս երկու իշխանութենէն երկիրներէն, ինչպէս նաև Դաղմատիայէն, Խրուաթիայէն, և Աւստրիական ուրիշ մէկ քանի նահանգներէն եկող խելմը կամաւորները՝ բաւական են ապստամբութեան կայծը վառ պահելու։ Ասոնք ձեռքերնուն եկածը պիտի ընեն, Եւրոպա ալ ասոնց ըրածին պարզ հանդիսատես մ'ըլլալէն զատ ուրիշ բան չը պիտի ընէ. Ռուսիոյ ալ փափաքն այն է՝ որ Տաճկաստան և իւր Քրիստոնեայ հպատակներն իրարու հետ իյնան եղնեն։

«Ռուսիոյ ըսածը սա է Տաճկաստանի —«կամ զըպէ՛ ապստամբներդ, և կամ արդար ու կանխատես բարենորոգմամբ զանոնք քեզի հետ միացո՛ւր»—։ Այս է Ս. Բէթերսպուրկի կառավարութեան ըսածը։ Բայց և այնպէս համոզուած է նա թէ, ո՛չ զօրութիւն և ո՛չ իրաւախոհութեան ջիջում, բնաւ որ և է արդիւնք մը չը պիտի ունենան։»

Եթէ Ռուսիոյ բռնած քաղաքականութեանը նկատմամբ Իկնաթիեվ զօրապետին ըրած այս յայտարարութիւններն ստոյգ և անկեղծ են, ինչպէս կը հաւաստէ Թայմզի կ. Պօլսոյ թղթակիցը, մեք ևս ամենայն անկեղծութեամբ և համարձակութեամբ կ'ըսեմք թէ, ասկէ ա՛լ աւելի յիմարանոցը կապուելու քաղաքականութիւն մը չը կրնար ըլլալ աշխարհիս վրայ։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒԹ

Բարիզ 13 դեկտ.

Պ. տը լա Բօշէթի, պուրպօնեան երեսփոխանին ըրած հրատարակութիւնը, որով աջակողման կեդրոնին անստոյգ դէնայքը մեղադրելով։ Ձախակողմեանց հետ միանալնին կ'արդարացնէր, խորին տպաւորութիւն մ'ըրաւ։

Օրլեանեանք խռոված են։ Ձախակողմեանց նորէն յաջողութիւններ ստանալնին կը յուսացուի,

Ըսուած կայ թէ Պ. Պիւֆէ՝ պաշտօնէական խնդիր մը պիտի հանէ։

14 դեկտ.

Այսօր մինակ Գ. Ֆուշէ ձախակողմեանը [Վերակուաի անդամ ընտրուեցաւ։ Քուէարկուներն քիչ էին։

Շամպօր կոմսին բերանն համարուած դիւանի կղերական թերթը կը մերժէ Պ. տը լա Բօշէթի ըսածը, ուրկէ կ'երեւի որ ձախակողմեանց կողմանէ Վերակուտի անդամ ընտրուեցաւ։

Վիէննա 13 դեկտ.

Գործերն նուազ են Պօրսային մէջ, իսկ գիներն հաստատ են և քիչ մ'ալ բարձր։

Բէչթա 13 դեկտ.

Երեսփոխանաց խորհրդարանը 40 միլիոնի փոխառութեան ծրագիրն ընդունեց, որոյ տոկոսը 1876 Յունվարէն սկսեալ վճարելի պիտի ըլլայ։

Մատրաս 15 դեկտ.

Կալլէսի իշխանը հոս հասաւ։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պերլինէն կը ծանուցանեն թէ կօրչաքօֆ իշխանին և Պիզմարք իշխանին մէջ եղած տեսակցութիւններէն, Արևելեան խնդրոյն վրայօք իրարու հետ կատարելապէս համաձայն ըլլալնին յայտնուեր ու հաստատուեր է։

Քրիստոնեայ հպատակաց բարւոքմանը համար երաշխաւորութիւն պահանջելու առաջարկութեան ծրագիրը, որ Աւստրիոյ կողմանէ պատրաստուած է, արդէն Ռուսաց կառավարութեան ձեռքը կը գտնուի, և հաւանական որոշում մը մօտալուտ կ'երեւի։

— Պրուսայի կուսակալութենէն ալ այս անգամ 3 միլիոն ղուրուշի հասոյթ մը յանձնուեր է տէրութեան գանձուն։

— Նոր Ջրանակաց խմբին համար Հունգարիա ապըսպրուած չորս Ջրհաններն ալ հասած ըլլալով, յիշեալ խմբին պէտք եղած գործիքներն լըրացած կը համարուին. ուստի և յուսալի է թէ առաջին անգամ հրդեհ մը պատահելուն, յիշեալ Ջրանկրաց նոր խումբը պիտի սկսի գործել։

— Մաքրիքէօյի երկաթուղւոյ կայարանը կատարուած չարագործութիւնը քննելու պաշտօնով կազմուած յանձնաժողովը անցեալ շաբթու նորէն մէկ քանի անձեր ձերբակալել տուեր է. բայց բուն յանցաւորները դեռ չէ կրցած գտնել։

Տեղւոյն պահականոցի զապթիէներուն թուոյն վրայ, ուրիշներ ալ աւելցուեր են, ոակայն կըսուի թէ գինուորներն փոխանակ իրենց հսկողութեան պատյան ընելու, անհոգութեամբ գիշերներուն մեծ մասը սըրճարաններու մէջ ժամանակ կանցնեն եղեր։

— Հինգշաբթիէն ուրբաթ լուսնալու գիշերը, տասնի չափ գինեալ անձինք՝ եկտի Գուլէի կայարանին կիսը գտնուող եւրոպացիի մը տանը դուռը բռնութեամբ կոտրել փորձած ատեննին, ելած աղաղակին վրայ՝ մօտակայ պահականոցէն քանի մը զապթիէները կը հասնին և չորագործներուն ետևէն կ'իյնան։

Այս միջոցին քանի մը հրացանի հարուածներ փոխանակուելով չարագործաց և զապթիէներուն մէջ, այս վերջիններուն հետ գտնուող մաքսատան գործակալ մը (քօլճու) ծանրապէս վիրաւորուելով կիյնայ, և որ տասներկու ժամէն յետոյ կը մեռնի.

տարուած դարմաններուն հակառակ. իսկ չարագործք կը յայտնին օձիքնին ձեռք չը տուած փախչելու։

— Տարտանէլի մէջ գերմանական շոգենաւ մը անգղիական շոգենաւու մը դէմ զարնուելով, սաստկապէս կը ձլատուի և նաւաձիգ շոգենաւով նաւահանգիստն կը բերուի նորոգուելու համար։

— Գանձը առջի օրը վերստին 190 հազար ոսկի յանձնեց օսմ. Պանքային. յունվարի կտրօններուն վճարմանն համար։

— Վերջին օրերս տեղի ունեցած ցրտերէն, Սալըպազարի կողմը անցեալ գիշեր սառած մարդու մը գիւկը գտնուեր է։

— Նոյնպէս ըրոյց մը կայ թէ Հերսէքի մէջ 700 պատերազմողաց խումբ մը ցրտէն սառեր է։

— Պանտրմայ բնակող գաղթական Չէրքէզներն այլ և այլ չարագործութիւններ և յափշտակութիւններ ընելու վրայ ըլլալով, Պուլսայի ոստիկանութեան գլխաւորը Օսպրի պէյ՝ այն կողմերը ղրկուեր է, որն որ գըլխաւորնին ձերբակալելով հարցաքննութեան կենթարկէ։

— Իկնաթիէվ զօրապետը հրաման ստացեր է, կըսուի, մօտ օրէն Ս. Բէթէրսպուրկ երթալու։

— Անգղիական կալինեանիս Միսէնճըը թերթը, որ Բարիզի մէջ կը հրատարակուի, Լոնտրայէն ընդունած հետևեալ հեռագիրը կը հրատարակէ։

«Եգիպտոս բնաւ ո և է դիտաւորութիւն մը չ'ունի Հապէշաստանն իր երկրին հետ միացնելու, թէ՛ սմբ բողջ և թէ մէկ մասը, այլ մինակ կուզէ որ Յովհաննէս թագաւոր վերջ տայ այն ասպատակութեանց, զորս ընելու վրայ են իր հպատակներն չորս հինգ տարիէ 'ի վեր Եգիպտական սահմաններէն ներս արշաւելով և աւարառութեան ելնելով։ Եգիպտական զօրքերն հրաման ընդուներ են Հապէշաստան չը մտնել, եթէ թագաւորը հաճի հարկ եղած երաշխաւորութիւններն տալ առ այդ։»

— Բարիզի մէջ այս անգամ նոր տեսարակ մը հրատարակուեր է «Խօսք մը Տաճկաստանի վրայօք» մակագրով, նախնի դիւանագէտի մը կողմանէ։ Հեղինակը կ'ըսէ թէ Հիւսիսային երեք տէրութիւնք, Տաճկաստանի առաջարկել ուզած բարենորոգմանց նկատմամբ, ըստ սկզբան համամիտ լինելով, գործադրական մասին մէջ դժուարութիւն կը գտչեն համաձայնելու։ Ցետոյ ըլլալիք բարեկարգութեանց անցնելով, որոց պէտքն ղգալի և անհրաժեշտ եղած է կ'ըսէ, հեղինակը կը յայտնէ թէ այդ չարեաց պատճառն եղած է 1840 էն 'ի վեր Բէչիտ բաշայի ձեռօք ներմուծուած կեդրոնացական դրութիւնը, Գաղղիոյ քաղաքագետութեանց օրինակին հետեւողութեամբ։

Սակայն Բէչիտ բաշային և իր նախորդացը երազած՝ այլ և այլ ազգաց 'ի մի ձուլումը՝ անկարելիութիւն մ'է։ Տաճկաստան 'ի բաց թողած է ժամանակաւ իր ունեցած այն ոզջամիտ աւանդութիւններն, ըորք երկրին այլ և այլ գաւառներուն՝ պէտք եղածին չափ ինքնօրինութիւն մը տրուելուն վրայ կը կայանար։ Ուստի և հեղինակը ապակեդրոնացման խորհուրդ կուտայ, և առերևոյթ ինքնօրինութեան դէմ կը խօսի, որ երթալով գաւառները Տաճկաստանէն անջատելու վրայ է կ'ըսէ։

Ուստի և սա՛ երեք բաները, որք են դատաւորութիւնը, տրոց հաւաքումը և տեղական ոստիկանութիւնը, կեդրոնացականութենէն զատել, և կ'ըսէ թէ պինուորական ծառայութիւնը քրիստոնէից վրայ ալ պէտք է տարածել, որպէս զի ասոնք ևս աւելի վոյթ և չահ ունենան Օսմ. կայսրութեան ամբողջութեան և անկախութեանը պահպանուելուն։

ԴՐԱՄԱԿԱՆ

Եչ. 4 դեկտեմ.

Դեկտ. 15 Լոնտրա	24 1/2
Բարիզ	—.—
Պօրսային առաջ	—.—
Պօրսան բացուեցաւ	27.16
Ցած գին	—.15
Բարձր գին	—.20
Ժամ 4 1/2	—.18
Բուս. երկաթուղի	68.—

———

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԷԹՂԹՈՑ

Ղայաթիտ 3 դնկտեմբեր

Ընդհ. Պրտ. Արժ. բաց		27 32
գոց		27 22
բարձր գին		27 35
ցած գին		27 16
Փոխ. 63 ի	Ֆր.	170
» 65 ի	»	170
» 69 ի	»	142 1/2
» 73 ի	»	138 1/2
Բուս. երկաթուղի	»	69
Գանձատոմս 72 ի Լ.Ս		—45
Ստոսիէթէ Ժէնէրալ	»	4 05
Ստոսիէթէ Օթթոման	»	3 16
Պանք տը Փօնսթ	»	4 15
Քրէտի Ժէնէրալ Լ Օ.		5—
Թրամվէյ	»	2 60
Տոկոս	%	—13—
Ըրբօր		8 10
Հէվալէսիզ		—
Փխնկդիը. Լոնտր. 3 ամսեայ		110 1/8
» Բարիզ	Ֆր.	22.0

ԱԶԴ

Մայրե՛ր. մայրե՛ր. մայրե՛ր։

Եթէ կուզէք Ձեր փոքրիկ երախաները փորի ցաւերէ ազատել

Եթէ կուզէք Ձեր փոքրիկ երախաները փորահարութենէ ազատել

Եթէ կուզէք Ձեր փոքրիկ երախաները ակռա հանելու ժամանակը վտանգէ ազատել.

Վերջապէս մայրե՛ր, եթէ կ'ուզէք որ Ձեր սիրելի երախաները թէ ցրեկ և թէ գիշեր փորի ցաւէ ազատ հանդարտ քնանան ու մեծնան և առանկով ձեր գիշերն ալ խաղաղ քնով անցնի.

Գործածեցէք ձեր երախաներուն համար «Միսիզ Ուինսլօչ Սուրինկ Սիրըբ» կոչուած դեղը։

Բիւրաւոր մայրեր այս դեղէն գործածած են իրենց զաւակացը համար և անոր օգտակարութիւնը կը գովեն։ կը ծախուի Մինասեանց Ամերիկեան վաճառատան մէջ որ 'ի Ղալաթիա։

Ձմեռուան սաստիկ եղանակիս հարբուղիս և հազ ըլլողներուն համար խիստ օգտակար դեղն է որ շատ ընդհանրութեան շատ տարւոյ փորձով հաստատուեցաւ «Ջերրի Բէքթօրալ», որն որ կը ծախուի Մինասեանց Ամերիկեան մաղազան ձարի—Գալաթիա։

ԱՌ ԴԱՇՆԱԿԱՀԱՐՍ

Երբ դաշնակը լաւ ութօ եղած չէ, ականջը կաւրէ, և դաշնակահարն ալ գէշ ճաշակի և գէշ զարնելու կը սովրի։ Դաշնակի մը ներքին կազմութիւնը իւր հաւասարակշռութիւնը կը կորսնցնէ. թէլերուն աւելի ձիգ եղած մասին տեղի տալու պարտաւորած ըլլալուն համար։ Հետեւաբար դործիքը կաւրուի և ձայնը կիջնէ - Ասկից զատ ճճին ու փոշին կաւրեն չուխային և մորթին մանր կըտորներն. որոնք գործարանին կազմութիւնը կը միացնեն, և բաղխարանին (քլավիէ) ներքին կազմութեան ու յօդակապերուն կատարելութիւն ու կանոնաւորութիւն մը կուտան։

Պ. Քարմէլ Մանֆրէ. նուագածութեան դասատուն, այլ և այլ դաշնակներ յարդարելուն (ագօրտէ) առթիւը, շատ մ'անձանցմէ գանգատներ լսեց, որոնք դաշնակը լաւ վիճակի մէջ պահելու դժուարութեանը համար կը տժգոհէին։ Զայս նկատելով Պ. Ք. Մանֆրէ հետևեալ պայմանը կ'առաջարկէ։

Ցանձն կառնէ, ամբողջ մեկ տարուան համար, դաշնակ յարդարել ամիսն մէկ անգամ միայն տարեկան մէկ օսմ. ոսկի վարձքով, վեց ամիսն անգամ մը կանխիկ վճարելի։ Դաշնակը առաջին անգամ յարդարելուն համար զատ 2 մէճիտիէ կառնէ, և տարուան միջոցի մէջ պատահելիք մանր մունր աւրուածներն շտկելն ալ բնականաբար իւր պայմանին մէջ չեն մտներ։

Պէտք ունեցողը կրնայ դիմել Գատըգիւղ Մօտա փողոցը, թիւ 81, դեղարանին քով, առ Պ. Քարմէլ Մանֆրէ դասատու նուագածութեան

—·—

ՍԿԶԲՈՒՆՔ

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ցովհաննու Պապոսէլոյ Մավեան

Ամբաշու վանուց տպարանէն Բ. տպագրութեամբ ի լոյս ընծայեալ սոյն գործը, որ մարդկային կենցաղավարութեան բոլոր վիճակին նկատմամբ ալ բարոյական վսեմ և գեղեցիկ սկզբունքներ կը պարունակէ, առհասարակ ամեն բարեսիրաց ալ ընթերցանութեանն արժանի աշխատութիւն մ' ըլլալէն զատ, մեր ազգային վարժարանաց մէջ ալ ընթերցանութեան լաւ և օգտակար դասագիրք մը ըլլալու ամեն հանգամանքներն ու արժանիքն ունի, որոց շատին մէջ արդէն յիշեալ գործն աշակերտաց իբր դասագիրք գործածեալ կը տեսնուի։

Կը գտնուի Պօլիս Գալաֆեան գըբատունը. Գին 1/4 մէճիտ։

ՈՒՍՈՒՄՆ

ՀԱՄԱԼԲԱՐԲԱՌ ԱՒԵՏԱՐԱՆԻ

ՑԵՒՄՆ ՄԵՐՈՑ

Ի Տ. ՆԵՐՍԷՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԷ

ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՊԱՏՐԻԱՐՔԷ ՀԱՅՈՑ Կ. ՊՕԼԻՍՈՑ

Սոյն ընտիր գործն, որ է չորից Աւետարանչաց համաձայնութիւնն ու անոնց բացատրութիւններն, աշխարհիկ լեզուաւ տուած, կը նուիրէ Հայոց Ամենապատիւ Տ. Տ. Ներսէս Ս. Աբգ Եպիսկոպոսն Վարժապետեան, արդի Պատրիարքն Կ. Պոլսոյ գրաբար մայրենի լեզուն պատճառ բռնելով Ս. Աւետարանին կենարար վարդապետութեանց լոյսը փայլելու չնորհէն զուրկ մնալ կարծուած ազգայնոց համար առաջին կարգի օգտակար այս գործը, որ թէ Ս. Աւետարանի աշխարհաբար թարգմանութիւնն ու թէ անոր ողջամիտ մեկնութիւնն միանգամայն իւր մէջը կը պարունակէ կրնայ չհասուր ըլլալ ամեն կարգի ազգայնոց, քահանայից և ժողովրդոց, զոր եթէ ուսանելու աշխատութենէն չը խուսափին՝ մոլորամիտ ազանդաւորած բարբանջմանցը տեղի չեն տար իւրեանց մտքերը պղտորելու։

Եկեղեցւոյ հայրապետի մը վայելուչ սոյն հեղինակութիւնն զՍրբազան Պատրիարք Հայրն արդեամբ իւր անուանակից հայրապետաց կարգին կարժանացնէ, որովհետև թէ բանիւ թէ գրով և թէ գործով Աստուծոյ եկեղեցւոյն շինութեան գործին աշխատած ըլլալու վկայութիւնն առած և երանելի հայրապետի տիտղոսն իրաւամբ կը ժառանգէ։

Սոյն հեղինակութիւնն Արմաշու վանուց տպարանէն ի լոյս կընծայի ութածալ միջակ դիրքով և կը բաղկանայ 764 երեսէ մաքուր թղթի վրայ տպագրեալ։

Վաճառման կեդրոնատեղին է ի Կ. Պոլիս Գալաֆեան գրատունը։

Գին մէկ արծաթ մէճիտ։

Գործին ստուարութեան հետ բաղդատելով գինը՝ խիստ աժան և գոյացեալ արդիւնքն ալ ըստ որոշման Սրբազան Հեղինակին պիտի գործածուի յօգուտ նոյն վանայ վարժարանին շինութեանը։

ՏՕՔԹՒՕՐ Մ. ՓԱՓԱԶԵԱՆ

Իր բնակութիւնը հաստատած է Ղալաթիա Հայոց եկեղեցւոյ փողոց թիւ 12 տունը, ուր պատրաստ է ամեն որ մինչև կէսօր հիւանդ ընդունել. և երեքշաբթի օրերն ձրի դարմանել։

ՀՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Ի ՎԵՐԱՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵԹԱՆՈՍՈՒԹԵԱՆ

Մեծ. Մ. Եփ. Էմինեան Մոսկուացի հայազգի գիտնականն մեծ լանմով աշխատած և մանրամասն խուզարկութեամբ վիճտուած գտած և առանձինն մատենի մը մէջ ամփոփելով Գաղղիերէն լեզուաւ տպագրած և Եւրոպայի ծանօթացուցած է՝ Աբեղեայ մէջ մեծ դիրք մը բռնող Հայ ժողովրդեան քրիստոնէութենէ առաջ ունեցած վիճակը։

Այս մատենին Հայերէն թարգմանութիւնը Արմաշու վանայ տպարանէն կը նուիրուի մեր սիրելի ազգայնոց, որպէս զի տեղեկանան թէ հայկական հնութանասէրութիւնը ի՞նչ վիճակ ունեցեր է, մեր նախնիք ժամանակին ի՞նչ տեսակ կրօնք պաշտեր են։ Կը գտնուի Կ. Պոլիս Գալաֆեան գրատունը գին 4 ղրշ։

ՄԵԾ ՇԱՀ

ԳՈՐԾԱՎՃԱՐ

ՁԱՆԷԹՈՑԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Թիւ 16—Ղալաթիա Քօմէսիոն խան —16 Թիւ

Ձանէթթոյի վաճառատունը իւր գոհարեղէնի գործառնութիւններն վերջացնել որոշած ըլլալով, այժմ մեծ զեղչով մը ծախել սկսած է բոլոր իւր գոհարեղէն նիւթերն, որոնք 14 և 18 այլ ոսկւոյ վրայ մեծ և փոքր ժամացոյցներէ, այլ և այլ ղրճայնեղէն, գինդ ապարանջան, գնդասեղ, պրօշ և այլ զարդու վերաբերեալ նիւթերէ կը բաղկանան, և որոց ամեն մէկուն վրայ իւր զեղչեալ գինը նշանակուած է։

Այցելութիւն տեսնելով պիտի համոզուին թէ իրօք մեծ և արտաքոյ կարգի զեղչ մ'եղած է գնոց վրայ, Օսմ. ոսկին 100 ղրշի հաշուով։

Գործավճարն սկսած ըլլալով, մինչև 1876 յունվ. 3/15 պիտի տևէ։

ՎՈՒՔՈՒԱԹԸ

ՄԻՒԶԹԱՔՊԷԼ

ԵԱՆԻ

ԳԱԶԱՄԻԱ

1876

ՍԷՆԷՔԻ ԻՍԼՎԻՑԷԻ

ՔԻՊԻՍԷՑԷ ՄԱԽՈՒՍ

Սաթըլըը հէր էրմէնի քիթապճը տիւքքեանլարընտա։ Ֆիյ 2 ղուրուշ։

ԵՆԻԶԷՐԻՔ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ

Ի ՑՈՒՆԱՐԷՆԷ

Օսմանեան պատմութեան ներկայ դարուս քաղաքական մասին ամենէն նշանաւոր ու հետաքրքրական էջերը լեցնող ենէնիչէրեաց սոսկալի սովորութիւնները, արարքն ու ջնջումը պատմական վիպասանութեան մը հեշտ և զբօսեցուցիչ կերպարանքին տակ աղդու և գեղեցիկ կերպով մը նկարագրող յունականէ թարգմանեալ երկհատոր սոյն ընտիր գործը՝ ընթերցման ախժանի աչխատութիւն մ'է, մանաւանդ անոր համար որ հեղինակն ականատես վկայ մ'եղած է ինքն անձամբ սոյն դէպքերուն, և երկրորդ որ պատմութեան մէջ յիշուած երեւելի անձանց և տեղեաց անուններն աւելի մեծ մասամբ և գլխաւորաբար տեղւոյս ժողովրդեանը խիստ ծանօթ են, որք առաւել ևս հաճելի կ'ընծայեն սոյն հետաքրքրական վէպին ընթերցումը։

Վաճառման կեդրոնատեղին է Ղալաթիա Օսմ. Պանքային դէմը Ս. Միքայէլեան էֆ. ի տպարանը, կը գտնուի նաև մայրաքաղաքիս բոլոր դրավաճառաց քով։

ՆՈՒԱԳ ՕՍՄԱՆԵԱՆ

ԹԵՐԹ ԿԻՍԱՄՕՍԵԱՅ

Բիանօյի և ուրիշ նուագարանաց համար պատրաստեալ արեւելեան եղանակաց։

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Նիկողոս և Յակոբ Ս. Թաշճեան

Դասատուք նուագարանաց Արեւելեան և Եվրոպական եղանակաց։

Գին բաժանորդագրութեան տարեկան . . . . . 80 ղրշ.

Գին բաժանորդագրութեան վեցամսեայ . . . . . 45 ղրշ.

Գին իւրաքանչիւր թերթի 1/4 մէճ.

Ստորագրութեան տեղերն են Նուրի Օսմանիէ ճատէն Գաբալը Ֆուրունին կարգը թիւ 41 Նուագ Օսմանեանի գրասենեակը և Գալաֆեանի ու Ֆրէնկեանի գրատուներըը, ուր ձեռքէ ալ կը ծախուին, ինչպէս նաեւ կամրջի գլխու պարագան։

ՊԱՏՄԱՆՈՒ ԼՐԱԳՐՈՑ

ԼՐԱԳԻՐ ամեն օր կը հրատարակուի, բաց 'ի կիրակի և Տօն օրերէ։

Տարեկան բաժանորդագրութեան գինն է 200 ղուռչ առանց փոստայի ծախուց։

Բաժանորդագրութիւնք ամսագլխէ սկսեալ կը նկատուի։

Խմբագրութեան ուղղեալ ո և է գրութիւնք՝ հեղինակին բուն ստորագրութիւնը կրելու են, ոչ թէ հրատարակելու համար, այլ յերաշխաւորութիւն վստահութեան։

Զը հրատարակուած գրութիւնք ետ չը տրուիր։

Խմբագրութեանս գրասենեակն է Ղալաթիա կլավանի խան, թիւ 5։

ՑՆՕՐԷՆ–ԽՄԲԱԳԻՐ

ՆԻԿ. Մ. ԹԻՒԼՊԵՆՏՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ց. ԳԱՎԱՖԵԱՆ ՓԻՐՓԻՔԻ ԽԱՆ ԹԻՒ 26 55